ՄՄԿ մեկնաբանություն 10
Պետական օգնություն՝ առանց գործառնական գործունեության հետ յուրահատուկ կապի

Հղումներ

- ՀՀՄՍ 8 *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*

- ՀՀՄՍ 20 *Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում*

Հիմնահարցեր

1 Որոշ երկրներում կազմակերպություններին տրամադրվող պետական օգնությունը կարող է նպատակաուղղված լինել որոշակի տարածաշրջաններում կամ արդյունաբերության ճյուղերում տնտեսական գործունեության խրախուսմանը կամ երկարաժամկետ աջակցությանը: Նման օգնություն ստանալու պայմանները կարող են յուրահատուկ կապ չունենալ կազմակերպության գործառնական գործունեության հետ: Նման օգնության օրինակներ են պետության կողմից ռեսուրսների փոխանցումը կազմակերպություններին, որոնք՝

(ա) գործում են արդյունաբերության որոշակի ոլորտում.

(բ) շարունակում են գործել նոր սեփականաշնորհված արդյունաբերության ոլորտներում. կամ

(գ) սկսում կամ շարունակում են գործունեությունը թերզարգացած շրջաններում:

2 Հարցն այն է, թե արդյոք նման պետական օգնությունը «պետական շնորհ» է՝ ՀՀՄՍ 20-ի գործողության ոլորտում, և հետևաբար պետք է հաշվառվի այդ ստանդարտի համաձայն:

Փոխհամաձայնություն

3 Կազմակերպություններին տրամադրվող պետական օգնությունը համապատասխանում է ՀՀՄՍ 20-ում տրված պետական շնորհի սահմանմանը, նույնիսկ եթե բացակայում են հատկապես կազմակերպության գործառնական գործունեությանը վերաբերող պայմաններ, բացառությամբ որոշակի տարածաշրջաններում կամ արդյունաբերության ճյուղերում գործունեություն ծավալելու պահանջից: Այդ իսկ պատճառով, նման շնորհները չպետք է ուղղակիորեն կրեդիտագրվեն բաժնետերերի բաժնեմասին:

Փոխհամաձայնության ամսաթիվը

1998 թ. հունվար

Ուժի մեջ մտնելը

Սույն Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 1998 թ. օգոստոսի 1-ից: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի պահանջների համաձայն: